

403X

6

Ennebor

891-995

2-76

4.10.

2.11.1.

Ennebor

1884

XVI, 2

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՂԿԵՍԵԳԻՏԵԿԱՆ—ՄԵՐԴԵՐԱՆԵԿԱՆ
ԴՐԱԴԱՐԱՆ

Նուէր Յովհաննէս Էւ Կարապէտ Խալա-
թեաններից՝ ի յիշատակ իրենց Եղբօր՝ պրօֆ.
Դրիգոր Խալաթեանի:

3132

4

№

ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. Զ. Ո. Գ. Ը.

1.

891.995

9-76

5

ԶՈՐՍ ԱՌԱԿ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ.



1002
96488

I. Մրմռան կառուց:

III. Կախարդ կանայք:

II. Կապոյտ կրակ:

IV. Փննաչի:



Մ Ո Ս Կ Ո Ւ Ա.

Типография О. О. ГЕРБЕКА, Чернышевский пер., домъ № 5.

1884.

2003

Дозволено цензурою. С.-Петербургъ, 6 Января 1884 года.

Այս փոքրիկ զրփոյկի հրատարակութեամբը մենք կամեցանք միայն երևան հանել Մ. Հ. Ո. Գ. Բ. գոյութիւնը:

Յոյս ունինք որ այսուհետեւ մեր Գ. Բ. կարող պիտի լինի աւելի մեծ խնամքով և հոգացողութեամբ լոյս ածել հետազայ տետրակները, որ 'նուիրում' ենք հայ ընթերցող մանուկներին: Ուստի պարտք ենք համարում խնդրել հասարակութեան ներողամտութիւնը ներկայ տետրակի պակասութիւնների համար:

ՄՐՄՌԱՆ ԿԱՏՈՒ

(Թարգմանութիւն).

Մի մարդ մեռնելով թողեց իր երեք որդոցը մի ջրաղացք, մի էշ և մի կատու: Եղբայրներին դժուար չէր բաժանել նոցա իրանց մէջ, նոքա Հրաւիրեցին մինչև անգամ միջնորդներ, մեծ եղբայրը ստացաւ ջրաղացքը, երկրորդը - էշը, իսկ կրտսերին բաժին Հասաւ կատուն: Նա չէր կարող մխիթարուիլ իր ստացած չնչին ու անպէտք բաժնով: «Եղբայրներս, ասում էր նա, կարող են միանալով իրանց Համար Հաց ճարել, իսկ ես, եթէ մորթեմ կատուն և նորա մորթից պատրաստեմ ինձ Համար ձեռնոցներ, կարող եմ յետոյ քաղցածութիւնից մեռնել»: Խորամանկ կատուն, լսելով այս խօսքերը, ասաց իր տիրոջը:

— Մի տխրիր, իմ տէր, միայն տուր ինձ մի տոպրակ և կարել տուր ինձ Համար կօշիկներ, որ կարողանամ մնացառուտ տեղերում մանգալ, և կտեսնես որ դու միւս եղբայրներիցդ աղքատ չես:

Խեղճ մարդը, թէպէտ և չէր Հաւատում կատուի

այդ խօսքերին, բայց իմանալով նորա մուկ բռնելու ճարպիկութիւնը, կատարեց նորա խնդիրը:

Աստուծոն իր ուզեցած բաները ստանալուն պէս, հագաւ կօշիկները, տոպրակը ուսը ձգեց, բռնեց թելը առաջի թաթերովը և բարձրացաւ սարի վրայ, որտեղ շատ ճագարներ կային:

Իր որսը սկսելուց առաջ, ածեց տոպրակի մէջ թեփ և կանաչեղէն և յետոյ ինքն էլ պարկեց արօտի վրայ և քնած ձեւացաւ: Երկար չսպասեց նա՝ մի փոքրիկ այս աշխարհի խորամանկութիւններին անծանօթ ճագար թռաւ տոպրակի մէջ: Աստուծոն իսկոյն քաշեց թելը, բռնեց նորան և առանց խղճալու խեղդեց: Եյս գործը վերջացնելով, նա գնաց թագաւորի մօտ, ողջունեց նրան և ասաց:

— Իշխան Արաբասը (այսպէս անուանեց կատուն իւր տիրոջը) հրամայեց ինձ յանձնել ձեզ այս ընծան:

— Եսս քո տիրոջը, ասաց թագաւորը, որ ևս շատ շնորհակալ եմ այդ ընծայի համար:

Այդ ուրիշ անգամ մեր կատուն պահուեցաւ դաշտում ցորենի մէջ և, երբ մօտն նորա տոպրակի մէջ երկու կաքաւ, բռնեց նոցա և տարաւ կրկին թագաւորին, որ այս ընծան էլ ընդունելով, շատ պարգևներ տուեց կատուն: Այսպէս մեր կատուն բերումէր թագաւորին իբր թէ իր տիրոջ որսում սպանած թռչունները, երկու երեք ամիս շարունակ:

Այդ օր կատուն իմացաւ, որ թագաւորը գնալու է ճեմելու իր աղջկայ հետ, որ աշխարհի ամենագեղեցիկ արքայադուստրն էր համարվում, և ասաց իր տիրոջը.

— Եթէ դու այսօր հետեւս իմ խորհրդին, երջանիկ մարդ կը դառնաս: Վրան միայն գետը լողանալու, իսկ մնացեալը իմ գործն է:

Իշխան Արաբասը կատարեց նորա խորհուրդը և սկսաւ լողանալ: Երբ կատուն տեսաւ որ թագաւորը անցնում է կառքով, սկսեց կանչել. «Օգնեցէք, օգնեցէք, իշխան Արաբասը խեղդվում է»:

Թագաւորը՝ լսելով այս աղաղակը, նայեց դէպի գետը և ճանաչեց գետի ափում կանգնած կատուն, որ նրան շատ որս էր բերել: Իսկոյն հրամայեց իր պահապաններին, որ օգնութեան հասնեն իշխանին: Այնչեւ որ գետից հանում էին իշխանին, կատուն մօտեցաւ թագաւորի կառքին և ասաց, որ իր տիրոջ լողանալու ժամանակ գողերը եկել և տարել են նորա շորերը:

Թագաւորը հրամայեց իր հանդերձապետին, որ շուտով հասցնէ իր ամենալաւ շորերը իշխան Արաբասին: Իշխանը, հագնելով թագաւորի շքեղ շորերը, մօտեցաւ և շնորհակալութիւն յայտնեց նրան: Թագաւորը սիրով ընդունեց նրան և առաջարկեց ճեմել իրանց հետ կառքով:

Աստուծոն՝ ուրախանալով որ իր խորամանկութիւնը աջողվում է, շտապեց առաջ և պատահելով դաշտում խօտ հնձող գիւղացիների ասաց.

— Եթէ դուք չասէք թագաւորին, երբ նա հարցնէ, որ այս դաշտը պատկանում է իշխան Արաբասին, կտոր կտոր կ'անեմ ձեզ:

Եւ իրաւ, թագաւորը՝ պատահելով խոտ հնձողներին, հարցրեց թէ ո՛ւմն է այս դաշտը:

— Իշխան Արաբասինը, պատասխանեցին նոքա միաբերան, որվհետեւ կատուի սպառնալիքը ազդել էր նոցա վրայ:

— Աւա՛ւ ժառանգութիւն էք ստացել, իշխան, ասաց թագաւորը: Եւրեւ այս արտերը լաւ հասոյթ են տալիս ձեզ:

Իսկ կատուն առանց կանգնելու վազում էր առաջ, և երբ պատահեց ցորեն հնձողների ասաց և նոցա.

— Ահե՛քք, հնձուորներ: Եթէ չասէք թագաւորին, որ այս ցորենը պատկանում է իշխան Արաբասին, կտոր կտոր կ'անեմ ձեզ:

Թագաւորը անցնելով կամեցաւ իմանալ, թէ ո՛ւմ է պատկանում և այս ցորենը:

— Իշխան Արաբասին, եղաւ պատասխանը:

Իսկ կատուն վազելով կառքի առաջից մի և նոյն բանը հրամայում էր բոլոր պատահողներին և ՚ի հարկէ թագաւորը աւելի ևս զարմանում էր իշխան Արաբասի հարստութեան վրայ:

Ահրջապէս մեր մրմռան կատուն հասաւ մի շքեղ պալատ, որ պատկանումէր մի շատ հարուստ մարդա-

կերի: Սորան էր նոյնպէս պատկանում այն բոլոր հողը, որի վրայով անցաւ թագաւորը: Աստուն իմանալով, թէ ի՛նչ մարդ էր այդ կախարդը և ի՛նչ էր նորա ոյժը, ներկայացաւ և ասաց, որ անցնելով նորա պալատի մօտը, հարկաւոր համարեց յայտնել իր խորին յարգանքը այս շքեղ պալատի տիրոջը:

Ախարդը լաւ ընդունեց նորան և առաջարկեց իր պալատումը հանգստութիւն առնել:

— Ետե՛մ ես, սկսեց կատուն, որ դու կարող ես ընդունել ամեն մի կենդանու կերպարանք, զորօրինակ առիւծի, փղի և այլն:

— Այդ ուղիւ է, պատասխանեց կախարդը, և քեզ այդ ապացուցանելու համար կ'ընդունեմ առիւծի կերպարանք:

Աստուն տեսնելով իր առաջ մի ահագին առիւծ, այնպէս վախեցաւ, որ թռաւ կտուրը, թէպէտ և վախ էր կօշիկներով մանդալ կտուրի վրայ: Մի քանի րոպէից յետոյ, տեսնելով որ կախարդը ընդունել է իր իսկական կերպարանքը, ցած իջաւ և հաւատացրեց որ սաստիկ վախեցաւ:

— Ինձ ասացին, սկսեց նորից խորամանկ կատուն, որ դու կարող ես նոյնպէս դառնալ և ամենաւիթըր կենդանի, զորօրինակ մուկն: Շշմարիտն ասեմ, այդ ինձ անհնարին է թուում:

— Ի՛նչ, քեզ անհնարի՞ն է թուում, բացադանչեց

կախարդը, և նոյն րոպէին դարձաւ մի փոքրիկ մուկն և սկսեց վազվզել:

Վատուն միայն այդ էր սպասում: Բսկոյն բռնեց և կուլ տուեց նրան:

Այս միջոցին թագաւորը մօտեցաւ պալատին և ցանկութիւն յայտնեց տեսնել պալատը:

Վատուն լսելով որ կառքը արդէն անցնում է կամրջիցը, առաջ վազեց և ասաց թագաւորին.

— Բարի լինի, թագաւոր, ձեր իշխանի պալատը դայը:

— Ինչպէ՞ս, իշխան, մի՞թէ և այս պալատը ձերն է: Իրաւ, ես սորանից գեղեցիկ պալատ չեմ տեսել: Ա՛թէ թոյլ տաք, կրնայե՞նք սննեակները:

Իշխանը օգնեց արքայադստրին դուրս գալ կառքից և զնաց նորա հետ թագաւորի յետեւիցը: Նոքա մտան մի մեծ դահլիճ, որտեղ մարդակերը պատրաստել էր մի ձոխ ընթրիք իր ընկերների համար:

Թագաւորը, հիացած իշխանի արժանաւորութիւններից և տեսնելով նորա անբաւ հարստութիւնը, իր աղջիկը նրան տուեց: Բսկ կատուն դարձաւ մի մեծ պաշտօնեայ և մուկն էր ուրտում իր զուարճութեան համար:

ԿԱՊՈՅՏ ԿՐԱԿ

(Թարգ. Լաբուէից).

Եղել է, չի եղել մեզանից շատ առաջ մի թագաւոր: Նրա զօրքում եղել է մի քաջ և հաւատարիմ զինուոր, որ ծառայել էր շատ տարիներ: Նրբոր պատերազմը վերջացաւ վերաւորուած զինուորը վերադարձաւ հայրենիք և աւել չէր կարող ծառայել: Թագաւորը ասաց նրան.

— Ղանս կորիր այժմ, դու ինձ ել հարկաւոր չես: Աս կը հրամայեմ, որ քեզ ել ոռձիկ չը տան, որովհետեւ ոռձիկ տալիս են միայն նրանց, որոնք ծառայում են:

Խեղճ զինուորը չը գիտէր թէ ինչպէս ապրուստի միջոց գտնէր և սաստիկ մտաւտանջութեան մէջ էր: Նա թափառեց ամբողջ օրը և երեկոյեան մօտեցաւ մի մեծ անտառի: Նրբոր գիշերը վրայ հասաւ, նա նկատեց մի կրակ և զնաց դէպի այդ կրակը մինչև որ տեսաւ մի տուն, ուր բնակվումէր մի կախարդ կին:

Թոյլ տուր ինձ, ասաց զինուորը, այս գիշեր այստեղ անցկացնեմ և քիչ մի բան տուէք ուտելու և խմելու, թէ չէ ես կը մեռնեմ:

— Ի՜հէ, ասաց կախարդ կինը, ո՞վ է փախստական զինուորին բան տալիս: Ի՛այց, ոչինչ, ես կ'ընդունեմ քեզ, միայն այն պայմանով, որ դու կատարես բոլոր իմ պատուէրները:

— Ի՜նչ կը հրամայէք, հարցրեց զինուորը:

— Եւ կը հրամայեմ, ասաց կինը, փորել էգուց իս պարտէզը:

Օ, ինուորը համաձայնեցաւ և միւս օրը առաւօտը վաղ սկսեց իւր ծանր գործը, բայց մինչև երեկոյ չը վերջացրեց, թէ և շատ աշխատեց:

— Եւ տեսնումեմ, ասաց կախարդ կինը, որ դու այսօր չես կարողանալու ճանապարհ բնկնես: Եւ քեզ մի զիշեր էլ կը թողնեմ ինձ մօտ, եթէ մի բեռը փայտ կոտորես ինձ համար:

Օ, ինուորը չարչարուեցաւ ամբողջ միւս օրը, և կախարդ կինը առաջարկեց նրան մնալ այնտեղ մի զիշեր ևս:

Եգուց դու պէտքէ մի հեշտ գործ կատարես, ասաց կախարդ կինը. իմ տան յետեր կայ մի հօր, ուր ընկել է իմ ճրագը, այդ ճրագը վառած է և կապոյտ կրակ է տալիս, բայց չէ այրւում: Ի՛նչ պէտքէ այդ ճրագը հանես և բերես տաս ինձ:

Ս'իւս օրը պառաւը, բերելով զինուորին հօրի մօտ, ցած իջեցրեց նրան սապատով: Օ, ինուորը գտաւ կապոյտ կրակը և պայման արած նշանը տուեց, որ կա-

խարդ կինը բարձրացնէ իրան: Եյնպէս էլ եղաւ. պառաւը սկսեց դուրս քաշել զինուորին, բայց երբ նա հասաւ հօրի բերանին, պառաւը ձեռքը առաջ տարաւ որ խլէ ճրագը:

— Չէ, չէ, ասաց զինուորը, նկատելով որ պառաւի միտքը ծռւոն է, դու չես ստանալ ճրագը, մինչև որ ես դուրս չը գամ բոլորովին և չը կանգնեմ գետնին:

Եյն ժամանակ կախարդ կինը շատ բարկացաւ, կրկին զինուորին հօրի մէջ ձգեց և ինքը հեռացաւ: Խեղճ մարդը ընկաւ խոնաւ յատակի վրայ, բայց չը վնասվեցաւ: Ապոյտ կրակը առաջուայ նման վառվում էր, բայց ի՜նչ օգուտ:

Օ, ինուորը լաւ էր հասկանում որ իրան մահ է սպառնում: Նրա դրպանում մի ծխաքաշ կար կիսով չափ ծխախոտով լի: «Եյս իմ վերջին զուարճութիւնը կը լինի», մտածում էր նա: Եւ մօտեցնելով ծխաքաշը կապոյտ կրակին՝ վառեց ու սկսեց ծխել: Օուխը հորում տարածվեցաւ թէ չէ, յանկարծ որտեղեց որ էր մի սև թղուկ կանգնեց զինուորի առաջ և հարցրեց.

— Ի՜նչ կը հրամայես, պարոն:

— Եւ ի՜նչ եմ կարող քեզ հրամայել, հարցրեց զարմացած զինուորը:

— Եւ պարտական եմ կատարել քո բոլոր ցանկութիւնները, պատասխանեց թղուկը:

— Աւ, եթէ այդպէս է, ասաց զինուորը, ուրեմն օգնիր ինձ դուրս գալ այս հորիցը:

Թզուկը բռնեց զինուորի ձեռիցը և տարաւ նրան մի ստորերկրեայ ճանապարհով, բայց չմոռացաւ առնել իր հետ և ճրագը: Ճանապարհին նա ցոյց տուեց զինուորին կախարդ կնոջ բոլոր հաւաքած և այնտեղ պահած գանձերը: Օփնուորը այնքան ոսկի վեր առաւ, ինչքան կարող էր: Երբ նրանք դուրս եկան գետնի տակից՝ զինուորը ասաց Թզուկին.

— Այժմ կապիր կախարդ պառաւին և տար դատարանների մօտ:

Քիչ ժամանակից յետոյ երեւեցաւ կախարդ կինը մի մեծ վայրենի կատուի մէջքի նստած և սարսափելի ձայններ հանելով: Քիչ էլ յետոյ վերադարձաւ Թզուկը և յայտնեց զինուորին թէ ամէն բան կատարել է:

— Ել ի՛նչ կը հրամայես, պարոն, աւելացրեց նա:

— Այժմ ոչինչ: Մու կարող ես գնալ տուն, բայց պատրաստ եղբւր դալ իսկոյն իմ ձայնին:

— Չայն տալը աւելորդ է, պատասխանեց Թզուկը: Մու միայն քո ծխախոտը վառիր կապոյտ կրակովը և ես իսկոյն կը կանգնեմ քո առաջին:

Այս ասելով Թզուկը անհետացաւ: Օփնուորը վերադարձաւ այն քաղաքը, ինչ տեղից նրան աքսորել էր Թագաւորը, մտաւ ամենաշքեղ հիւրանոցը և հրամայեց կարել իւր համար գեղեցիկ շորեր, խակ պանդոկա-

պետին պատուիրեց մի փառաւոր բնակարան պատրաստել: Երբ այս ամէնը պատրաստ էր, զինուորը կանչեց Թզուկին և ասաց. «Այս հաւատարիմ էի Թագաւորին, բայց նա ինձ աքսորեց և քաղցած թողեց: Հիմայ ես կամենում եմ վրէժխնդիր լինել դուրս համար»:

— Ի՞նչ էք կամենում ուրեմն, հարցրեց Թզուկը:

— Այս գիշեր, երբ Թագաւորի աղջիկը կը քնի, դու նրան կը բերես ինձ մօտ և ես կը ստիպեմ որ նա ծառայէ ինձ, ինչպէս հասարակ աղախին:

— Ինձ համար այդ շատ հեշտ է, բայց եթէ բանը բացվի՝ քեզ մեծ վտանգ է սպառնում:

Բայց և այնպէս նա հնազանդվեցաւ: Այս գիշերին կրակի սպասաւորը բաց արեց դուռը և մտաւ Թագաւորի աղջիկը ձեռքին:

— Ահ, դու հիմայ իմ իրաւունքի տակ ես, աղաղակեց զինուորը, վազելով դէպի աղջիկը, հէնց այս րոպէիս սկսիր քո գործը. առ աւելը և աւելի իմ սենեակները:

Եւ ու մոռնջ, կիսաբաց աչքերով, Թագաւորի աղջիկը հնազանդութեամբ կատարում էր ամենայն տեսակ հրամաններ և երբ առաջին անգամ կանչեցին աքաղաղները, Թզուկը տարաւ նրան կրկին արքունիք և դրեց իւր տեղը:

Միւս օրը վաղ վեր կենալով Թագաւորի աղջիկը գնաց հօր մօտ և պատմեց թէ մի տարօրինակ երազ է տեսել: «Երբ թէ, ասում էր նա, կայծակի արագութեամբ ինձ

տարան մի զինուորի տուն և այնտեղ էս պարտաւոր էի ինչպէս Հասարակ աղախին ծառայել: Ենձ յանձնում էին ամեն տեսակ կռակի գործեր և ես պէտքէ աւելելի սնեհանները և սրբէի կօշիկներ: Այդ երազ էր, աւելացրից նա, բայց այնու ամենայնիւ ես զգում եմ այնպիսի սաստիկ յողնութիւն, կարծես թէ այս ամէնը իրօք պատահած լինի:

— Հատ հաւանական է որ քո երազը իրօք էլ պատահած լինի, ասաց թագաւորը։ Նս քեզ խորհուրդ եմ տալիս ծակիլ զրպանդ մի քանի տեղից և ածել այնտեղ մի քանի հատ սիսեռ։ Ճանապարհին սիսեռի հատիկները վայր կը թափեն և փողոցում հետքեր կը թողնեն։

Այլը թագաւորը տալիս էր այս խորհուրդը, թշուար
կանգնած էր անտեսանելի կերպով նրա մօտ և լսումէր:
Ահա զիշերին, երբ նա կրկին յափշտակել էր թագաւորի
աղջկան և տանումէր զինուորի մօտ, սիսեռերի մի քանի
հատիկները վայր ընկան, բայց ճանապարհը ցոյց տալ
էին կարող, որովհետեւ խորամանկ թշուար ամէն փո-
ղոցներում սիսեռ էր շաղ տուել: Թագաւորի աղջկէր
կրկին ստիպուած էր ծառայել զինուորին մինչև աքա-
ղաղների կանչելը: Առաւօտը թագաւորը մարդիկ ու-
ղարկեց սիսեռի հատերը որոնելու, բայց իզուր. աղ-
քատ երեխաները վաղուց արդէն հաւաքել էին սիսեռի
հատերը ամէն փողոցներում:

«Պէտք է մի այլ հար գտնել, ասաց թագաւորը: Պէտք ունիւնիր կոշիկներ, երբ կը պարկես քնելու և քիչ կը գան տանելու զինուորի մօտ, դու նրանցից մէկը թող սննեակում, միւսը տա՛ր հետք: Եւ կը գրտնեմ երկրորդը»:

ԹՎՈՐԱԿԸ ամեն բան լսեց և երբ զինուորորդ կրկին հրամայեց բերել իր մօտ Թադաւորի աղջկանը, նա խորհուրդ էր տալիս այդպէս բան չանել, ասելով Թէ նա ոչինչ չէ կարող հնարել Թադաւորի այդ նոր խորամանկութեան դէմ և եթէ կօշկիլը գտնեն զինուորորդի մօտ՝ նրան կը պատժեն:

«Ղուռ այն արած, ինչ որ քեզ հրամայում են», պատասխանեց զինուորորդւ. և թազաւորի աղջկեր երրորդ անգամ ստիպուած էր ծառայել աղախնի նման Լայց առաջուց նա իւր կօշիկներից մէկը անկողնում թաղցրեց: Միւս օրը թազաւորը հրաման հանեց փնտռել քաղաքում իւր աղջկայ կօշիկը, մարդիկ եկան զինուորի մօտ և գտան կօշիկը: Լայց ինքը զինուորորդ արդէն փախել էր թզուկի խորհրդովը, նրան բռնեցին և բանտ նստացրին: Փախչելու ժամանակ նա մոռացել էր առնել կապոյտ կրակը և փողերը, այնպէս որ նրա դրպանում ոչ մի կոպէկ չը կար: Լանտի պատուհանի մօտ նստած էր զինուորը, յանկարծ նա նկատեց փողոցում իւր ընկերներից մէկին, կանչեց պատուհանի մօտ և ասաց. «Միրելե՛ր ընկեր, խնդրեմ քիչ մի նեղութիւն

$$\begin{array}{r} 1002 \\ 6488 \end{array}$$

քաշելը, զնա բեր իմ փոքրիկ արկղը, որ ես մոռացել եմ հիւրանոցում: Ես քեզ կը վարձատրեմ»:

Ընկերը իսկոյն վազեց դէպի հիւրանոցը և բերեց ուղած արկղը: Չինուորը երբ որ մենակ մնաց, սկսեց ծխել և կանչեց թղուկին:

«Մի վախենար, ասաց թղուկը զինուորին, զնա ուր որ քեզ կը տանեն և թոյլ տուր ինչ ուզումեն անեն, միայն չը մոռանաս հետդ առնել կապոյտ կրակը:

Առաւօտը դատաւորները դատում էին զինուորին և թէ և նա մեծ յանցանք չէր գործել, բայց և այնպէս դատաւորները դատապարտեցին նրան մահ: Նրբ նրան տանում էին սպանելու, նա խնդրեց թագաւորից մի միակ վերջին ոգորմութիւն:

— Ի՞նչ ես ուզում, հարցրեց թագաւորը:

— Թագաւոր, ասաց նա, թոյլ տուր ինձ գնալու ժամանակ քիչ մի ծխեմ:

— Այդ դու գիտես, պատասխանեց թագաւորը, միայն մի կարծիր, թէ ես քեզ կը ներեմ:

Այն ժամանակ զինուորը հանեց ծխաքաշը և վառեց կապոյտ կրակով: Մի քանի անգամ ծուխ հանեց նա բերանից թէ չէ, յանկարծ եկաւ թղուկը փայտը ձեռին և ասաց. «Ի՞նչ կը հրամայես, պարոն»: — Ապա մի լաւ քօթակ տաս այս կաշառք ուտող դատաւորներին և նրանց օգնականներին, չը խնայես անգամ թագաւորին, որ այդքան չարչարեց ինձ: Այն ժամանակ թղուկը կայծակի

արագութեամբ յարձակեցաւ ժողովրդի վրայ և բռնորը, ում որ դիպչումէր նրա փայտը, ընկնում էին գետին և չէին համարձակվում տեղներից շարժվել:

Թագաւորը շատ վախեցաւ և սկսեց աղօթք անել: Ահանքը փրկելու համար նա տուեց զինուորին իւր թագաւորութիւնը և աղջիկը:

ԿԱԽԱՐԴ ԿԱՆԱՅՔ

(Պերդից).

Ինու՞մ է, չէ լինու՞մ մի այրի կին. սա ունենում է երկու աղջիկ: Մեծ աղջիկն ու մայրը թէ՛ վարք ու բարքով, թէ՛ դէմքով այնպէս միմեանց նման էին, ինչպէս երկու տապակ խնձոր: Բայց երկուսն էլ այնպէս հպարտ ու անտանելի էին, որ նոցա հետ ապրելը բոլորովին անկարելի էր:

Իսկ փոքրիկը այնքան խոնարհ ու սիրելի էր, որ իսկ և իսկ հօր պատկերն էր ներկայացնում մի և նոյն ժամանակ այնպէս գեղեցիկ էր, որ նորա պէսը տեսած չէն մարդիկ: Որովհետեւ մայրն ու մեծ աղջիկը այդքան նման էին միմեանց, մայրը անչափ սիրում էր մեծին և սարսափելի ատում էր փոքրին: Նա վերջինիս խոհանոցումն էր կերակրում և անդադար ստիպում էր նորան բան անել:

Բացի դորանից այդ փոքրը օրը երկու անգամ շատ հեռու ճանապարհ պիտի գնար ջուր բերելու մեծ և ծանր սափորով: Մի անգամ, երբ նա ջուր էր առնում աղբւրից, նորան մօտեցաւ մի կին և խմելու ջուր խնդրեց:

— Համեցէք, ասաց այդ սիրելի աղջիկը և ողողելով սափորը՝ լցրեց աղբւրի մաքուր ջրիցը և տուեց նորան, բռնելով մի և նոյն ժամանակ սափորը, որպէս զի նորան դժուար չլինի խմելը:

Խմելուց յետոյ բարի կ'ինը ասաց.

— Ղու այնքան սիրուն, այնքան բարի ու սիրելի ես, որ ես ուզում եմ քեզ մի բան շնորհել: (Նանն այն է, որ դա մի բարի կախարդ կ'ին էր և երեւել էր նորան որպէս մի աղքատ գիւղացի կին, որպէս զի իմանայ որքան բարի է այդ ջահիլ աղջիկը):

— Ահա ես քեզ ինչ կը շնորհեմ. ինչ որ կամենաս ասել, քո իւրաքանչիւր խօսքդ պիտի դուրս գայ բերանիցդ կամ ինչպէս ծաղիկ կամ ինչպէս թանկագին քար:

Երբ սիրուն աղջիկը տուն վերադարձաւ, մայրը հայհոյեց նորան այնքան ուշանալուն համար:

— Ների՛ր ինձ, մայրիկ, պատասխանեց խեղճ աղջիկը, — որ ես այսքան ուշացայ:

Այս խօսքերը արտասանելիս նորա բերանիցը դուրս ելան երկու վարդ, երկու մարգարիտ և մեծ մեծ ալմաստեր:

— Այս ինչ է, զարմանալով բացագանչեց մայրը, — կարծես, բերանիցդ ալմաստեր ու մարգարիտներ լինին թափվում: Այդ ի՞նչ է նշանակում, աղջիկս:

Այս առաջին անգամն էր, որ նա նորան «աղջիկս» ասաց:

Իսեղճ աղջիկը միամիտ պատմեց նորան գործի եղելութիւնը — իսկ ալմաստերը կրկին թափվում էին նորա շրթունքներից:

— Արդարեւ, բացագանչեց մայրը, — պէտք է ուղարկած և իմ սիրելի աղջկանս: Նայի՛ր, սիրելի՛ս, տե՛ս, ինչեր են թափվում քրոջդ բերանիցը, երբ նա խօսում է. որքան լաւ կը լինէր, եթէ դու ևս այդպիսի շնորհք ունենայիր: Ամենում ես, գնա, շատրուանից ջուր բեր և, երբ աղքատ գիւղացի կ'ինը քեզանից խմելու ջուր խնդրէ, քաղաքավարութեամբ տուր:

— Ինչպէս չէ՞ կոշտ ու կոպիտ պատասխանեց մեծ քոյրը, — ես գնամ, շատրուանից ջուր բերեմ...:

— Իսկ ես ուզում եմ, որ դու գնաս, բարկացաւ նորա վրայ մայրը, — այն էլ այս լուպէիս:

Աղջիկը գնաց, միայն ողջ ժամանակ միթմրթում էր: Նա առաւ տան ամենագեղեցիկ արծաթեայ շէշը: Հէնց որ մօտեցաւ շատրուանին, տեսաւ որ անտառից իւր մօտ է գալիս շքեղ հագնուած մի կին և խնդրում է խմելու ջուր:

Այս մի և նոյն կախարհն էր, որ երեւել էր նորա քրո-

ջը, բայց այժմ նա ընդունել էր պատուաւոր տիկնոջ կերպարանք, որպէս զի խմանայ, որքան անբաղաճաւարի է այս աղջիկը:

— Մի՞թէ ես եկել եմ այստեղ, որ քեզ ջուր տամ, կոպիտ ու հպարտ պատասխանեց աղջիկը: Ահա ես բերել եմ արծաթէ շէշը, որ առաջարկեմ քեզ, տիկին, խմել սորանով ջուր: Ինչպէս չէ՞ փայլող շատ կը լինի:

— Ղու անբաղաճաւարի ես, պատասխանեց կատարգ կինը բարկանալով: Ղէ լաւ. եթէ դու չես կամենում մի աննշան ծառայութիւն անել, ես քեզ այս կը շնորհեմ՝ իւրաքանչիւր խօսքիցդ յետոյ բերանիցդ թող օձ կամ դորտ վայր ընկնի:

Մայրը որ տեսաւ նորան, բարձրաձայն հարցրեց.

— Ի՞նչ է, աղջիկս:

— Ի՞նչ է, ոչինչ, մայրիկս, պատասխանեց կոպիտ աղջիկը, բերանից վայր ձգելով երեք օձ, երեք դորտ:

— Տէր իմ Աստուած, բացադանչեց մայրը, — Ի՞նչ եմ տեսնում: Ի՞նչ բոլորի պատճառը քոյրդ է, դորա փոխարէնը նա կըստանայ ինձանից:

Իւ մայրը իսկոյն ընկաւ փոքր աղջկայ վրայ և սկսաւ ծեծել: Իսկզձ, ողորմելի աղջիկը փախաւ, թաք կացաւ մօտակայ անտառումը: Այդ իսկ ժամանակ որսից վերադառնում էր թագաւորի որդին, հանդիպեց նորան և տեսնելով որ այդպէս գեղեցիկ է, հարցրեց թէ ի՞նչ է անում անտառում կամ ինչու է լալի:

— Ա՜հ, պարոն, մայրս ինձ դուրս արեց տանից:

Այս խօսքերն ասելով, նա, ինչպէս և առաջ, իւր վարդադոյն շրթունքներէցը վայր ձգեց հինգ թէ վեց մարդարիտ, նոյնքան էլ ալմաս: Թագաւորի որդին շատ զարմացաւ այս բանի վրայ և հարցրեց թէ այդ ի՞նչ նշանակում:

Աղջիկը նորան բոլորը պատմեց: Թագաւորի որդին շատ սիրեց նորան և մտածելով, որ այս աղջիկը իւր այսպիսի շնորհքովը աշխարհիս ուրիշ հարուստ հարսնացուներէց ամենահարուստն է, տարաւ նորան իւր հօր պալատը և այնտեղ պսակուեցաւ նորա հետ:

Ի՞նչ նորա քոյրը կարողացաւ զրգուել իւր դէմբոլորի ատելութիւնը, մինչև անգամ մայրը դուրս արեց նորան տանից և թշուառ աղջիկը ոչ մի տեղ իւր համար ապաստան չգտնելով, մեռաւ անտառի ծայրումը:

Փ Ի Ն Ա Չ Ի ¹⁾

(ժողովրդական հեքիաթ):

Ինտում է, չէ լինում մի փինաչի: Փինաչու արհեստը յայտնի է թէ ի՞նչ է. օրական լաւ փինաչին ինչքան էլ աշխատի մի երկու աբասի ²⁾ փող հազել կարո-

¹⁾ Կօշիկ կարկառող: ²⁾ Աբասի — 20 կոպ.

ղանայ աշխատել: Բայց այդ մեր փինաչին հէնց բնաւ փող դատելու հետ գլուխ չունէր անաչէնք. չէ թէ չէր կարող, այլ չէր ուզում ամենեւին իր մշտական բաժնից աւելի փող վեր ունել օրական. իսկ այդ բաժինը, ի՞նչ էք կարծում, ընդամենը մի աբասի էր:

Որ վեղը կտրէիր՝ դրանից աւելի փող չէր դնի նա գրպանը: Ինքն էր մի կնիկ. օրուան վաստակած մի աբասուն առնում էր մի շահու հաց, մի շահու միս, երկու շահու էլ զինի ու քէֆը տեղը տուն էր շտապում: Անիկը վեր էր կենում ձեռաց միսը խորովում, սուփրան ¹⁾ բաց անում ու հացի էին նստում, ուտում խմում քէֆ քաշում:

Մի դափ էլ ունէին որ մարդն ածում էր կնիկը պար գալիս, կնիկը դմբւմբացնում էր՝ մարդը պար գալիս: Յետոյ որ քնելու ժամանակն էր գալիս՝ իրանք էին մի երկու կտոր խսիր ²⁾, առնում էին տակները քցում դռշակի տեղ ու մի երկու հաստ ձող՝ որ բարձի փոխարէն գլխատակներն էին դնում. այդպէս անուշ անուշ քնում էին վեր կենում, Աստծուն փառք տալիս: Առաւօտներն էլ մարդը իր դազդեհա՜ մազդեհա՜, բիզ ասեղ վեր էր ունում գնում իր բանին, կնիկը մնում էր տանը մինչև մարդու գալը: Փինաչին էլ այն է իր դործը գիտէր. հէնց մի աբասին լրացնում էր թէ չէ, դազդեհա՜ մազ-

¹⁾ Սփռոց: ²⁾ Փսիւթ:

դեհա՜ հաւաքում էր, զինին ու այնոյինն առնում, տուն գալիս ու քէֆը նորից սարքում:

Այդ երկրի թագաւորն էլ մի շատ խաղաղասէր ու հանդարտ մարդ էր ու շատ էր ուզում որ իր քաղաքումը ոչինչ անկարգութիւն, աղմուկ չը լինի: Հէնց այս պատճառով մի մին զիշերները շորերը փոխած, իր նազըր վեզրի հետ դուրս էր գալիս փողոցները ման գալիս, տեսնէ թէ բոլորը քնած են ու աղմուկ, գոռգոռոց չկայ քաղաքումը:

Մի այսպիսի գիշեր, երբ էլ թագաւորը դուրս է գալիս ինչ է տեսնէ թէ հանդարտ է քաղաքը թէ չէ, շատ դէս ու դէն ման գալուց յետոյ, յանկարծ մի դմբւմբոց է ականջովն ընկնում:

— Վաւի ձայն է, ասում է նազըր վեզրին, — մի գնանք տեսնենք այս ի՞նչ բան է, ո՞վ է այս կէս գիշերին աղմուկ անում: Վալիս են այդ ձայնին մի խուլ փողոց, տեսնում են որ մի քոսոտ տանից է գալիս ձայնը: Վուռը ծեծում են. մեր փինաչին դուրս է գալիս:

— Ի՞նչ էք ուզում, երբայրացո՛ւ:

— Հիւր չէ՞ք ընդունի:

— Ա՛յ մեր աչքի վրայ, մեր գլխի վրայ: Համեցէք, ներս համեցէք. Աստծու տուածիցը դուք էլ վայելեցէք, մենք էլ: Ինչ ունենք չունենք ձերն է. մեր տունը ձեզ փէշքաշ ¹⁾:

¹⁾ Ընծայ, նուէր:

Թագաւորն ու նազիր վեզիրը մի աչք ածեցին ինչ կար չկար փինաչու տանը, մնացին բերանները բաց. իրար երեսին են նայում զարմացած ու ճարները կտրած նստում են նրանց կողքին ու նրանց հետ սկսում են ասել խօսիլն ու քէֆ անելը:

— Ի՛հ բարեկամ, ինչպէս տեսնում եմ, բաններդ Աստուծով աջ է գնում որ այդպէս ուրախութիւն էք անում քէֆ քաշում:

— Ի՛հ, կանք էլի. Աստծու տուածոյնն ապրումներ, կառավարվում:

— Բա արհեստիդ անունն ի՛նչ է:

— Ի՛ս փինաչի եմ բազարի դրանը:

— Ի՛, շատ է գալիս օրական, հարցնելն ամօթ չլինի:

— Շատ ու քիչը չեմ իմանում, միայն իմ բաժինն է օրական մի աբասի. մի շահուն հաց եմ առնում, մի շահուն միս, երկու շահուն զինի ու ամէն օր այսպէս մարդ ու կնիկ քէֆ ուրախութիւն ենք անում:

Ա՛յրջը՝ երբ որ քնելու ժամանակը եկաւ, փինաչու կնիկը խօսիլն ու փայտերը բերեց քցեց հիւրերի համար ու իրանք մարդու կնիկ գնացին տան մի անկիւնումը կուշ եկան ու այնպէս քնեցին մինչև առաւօտ: Ա՛յցսը դեռ չբացուած՝ փինաչու հիւրերը վեր կացան շնորհակալութիւն արին ու գնացին իրանց բանին:

Թագաւորը շատ էր զարմացել փինաչու այդ տեսակ ապրուստի վրայ. ուզեցաւ փորձէ տեսնէ թէ՛ ի՛նչ

պէս ախար այդ քոստոս պղուդ¹⁾ փինաչին պէտք է ամէն օր քէֆ անէ, եթէ չկարողանայ իր մի աբասին ճարել:

Ա՛յլս օրը թագաւորիցը հրաման դուրս եկաւ որ ոչ մի փինաչի էլ չբանէ բազարի դրանը:

Ա՛յր խեղճ փինաչու օրը շան օր էր. մնացել էր քշուած շուարած թէ՛ որտեղից պէտք է հացի փող զրտնէ այդ օրը: Մնաց խեղճը վեզը ծռած ու փռնուլ դուքանիցը որ նոր հացի անուշ հոտը քթովը չլիպաւ, սիրտը դնաց յետ եկաւ. կամաց կամաց եկաւ ու դուրսը քաշ քցած փռի առաջին կանգնեց: Փռնչին տաք տաք բոքոնները որ չէր դուրս հանում փռիցը ու մի կողմը շարտում, խեղճի բերանի թուքը գնում էր: Փռնչին այնպէս իմացաւ թէ աղքատ է, ողորմութիւն է ուզում, մի կտոր հաց կտրեց ինչ է իրան տայ, բայց փինաչին ասաց որ ողորմութիւն չէ խնդրում, ուզում է դործի մանէ նրա մօտը թէ որ կ'ընդունի: «Ա՛աւ, ասում է փռնչին, ամիսը այսքան մանէթ կը տամ, արի բան արա՛»:

— Չէ, ասում է, ինձ օրական մի շահու հաց տուր, երեք շահի էլ փող:

Փռնչին համաձայն եղաւ ու մեր փինաչին աշխարհքովը մին եղած տուն վաղեց.

— Ա՛յ կնիկ, քէֆդ տեղը պահի՛ր. թագաւորի ի՛նչն

1) Աղքատ:

ասեմ, ուղեցաւ մեր հացը կտրէ, բայց չէր խմանում որ մենակ փինաչութիւնով չեն մարդիկ փող աշխատում: Հիմայ մի փռնչու մօտ եմ բանում. քէ՛՛՛ արա՛, ուրախացիր, էլի մեր օրական զինին, հացն ու միսը կայ ուկայ:

Այս գիշեր էլ թագաւորը իր նազը փզը հետ դուրս է գալիս ման գալու քաղաքը ու գալիս է որ տեսնէ թէ փինաչն ի՛նչ օրի է, որ ինքը իրաւունք չէ տուել էլ փինաչները բազարի դրանք բանեն: Վալիս է տեսնում էլի առաջուան պէս մարդու կնիկ զինին, խորովածը դրել են առաջներն ու դափը ձեռներն առել: Ելի «բարովի Աստծու բարին» ասում են ու ամէն մարդ իր տեղը նստում:

— Փինաչի եղբայր, մենք լսել ենք որ թագաւորը հրաման է հանել որ էլ փինաչի չը բանէ բազարի դրանք. դու ճիշտեղից ես ախար այս այնոյինը ճարել:

— Բ՛հ, աօ որ թագաւորը լսելք ունենար, այդպէս հրաման կը տար: Ել ուրիշ գործ կարումը էր գլխներիցս. հիմայ փռնչու մօտի բանում եմ ու էլի իմ հացի, մսի ու զինու փողն առնում, ուտում խմում, ուրախանում:

Թագաւորը մնացել էր բոլորովին զարմացած փինաչու վրայ. մաքումը դրեց ինչպէս որ լինի դրան մի նեղը լծէ, տեսնէ ի՛նչպէս պէտք է սա զլուխ պահէ, որ օրը դատում է, օրն ուտում, էգոցուայ վրայ ամենեւին միտք չէ անում: Ասելն ու անելը մէկ է լինում:

Հէնց հետեւեալ օրը ուղարկում է կանչում փինաչուն: Փինաչն՝ դողն ընկնում է ջանք, վախժախերով գալիս է, թագաւորին զլուխ տալիս, առաջին կանգնում:

— Ես լսել եմ որ դու մի շատ քաջ, խելօք, հաւատարիմ մարդ ես. ուզում եմ քեզ մի պաշտօն տամ որ միշտ առաջիս լինիս ու իմ ասածը կատարես: Ահա՛ անայս թուրը ու այստեղ կայ որ ում զլուխն տսեմ ձեռաց կտրես: Վու ինձանից անբաժան կը լինիս ու լաւ ոռձիկ կ'ստանաս:

— Թագաւորն ապրած կենայ, քո ծառան եմ, ի՛նչ ասես՝ պիտի լսեմ. բայց որ զլուխս թոցնել տաս այս ըոպէին, այդ չեմ կարող անել, կամքը քոնն է, թագաւորն ապրած կենայ: Ձեմ ուզում քո տուած ոռձիկը. այդ նրան տուր, ով ինձանից աւելի է արժանի այդ պատուին. իսկ ես միայն մի բան եմ խնդրում ու այդ պայմանով եմ յանձն առնում քո տուած պաշտօնը. ինձ օրական մենակ մի արասի տուր ու ամէն երեկոյ բաց թող զնամ իմ տունը:

— Վէ՛ թէ որ շատ ես դէմ ընկնում, ամէն օր տուն կ'արձակեմ քեզ, բայց ուզածդ արասին չեմ տայ. փողդ միշտ ամսագլխին կ'ստանաս:

Փինաչն ճարահատած պէտք է լսէր. բայց ի՛նչ խելօքի օրն էր, Աստուած իմ թշնամուն ցոյց չտայ: Վ՛ժի պէս այս կողմ այն կողմն էր ընկնում, չէր խմանում ինչ անէ, ճիշտեղից իրանց օրուան ապրուստը ճարէ: Վ՛եր-

ջապէս մի բան ընկաւ միտը, ինչպէս որ երկնքից մի լոյս ծագեց նրա համար. գնաց ուղիղ մի զինազործի մօտ, թուրը հանեց տուեց իրան —

— Եւ այս թուրը քեզ գրաւ, գրա տեղը մի հատ այդպէսը շինի՛ր փայտից, ա՛ռւր ինձ տեղը գնեմ ու ինձ օրական մի աբասի փող տո՛ւր մինչև ամսի վերջը:

Թագաւորի տուած թուրը անխօս դրեց գրաւ, փողն առաւ ու վիր կացաւ եկաւ էլի տուն, իր քէֆն սկսեց:

Ղիշերուն մի ժամանակը թագաւորն էլի դուրս է գալիս նազիր վեզրի հետ, զայ տեսնէ ի՛նչ է անում փինաչին:

Հիմայ դու արի տես թագաւորի զարմանքը, հրք էլի փինաչու դափի ձայնն ականջն է ընկնում: Վալիս է փինաչու դուռը ծեծում, ներս մտնում:

— Բարի իրիկուն:

— Հայ Եստծու բարին, իմ ազիզ¹⁾ հիւրեր, համեցէք:

— Ե՛, փինաչի եղբայր, աչքդ լոյս, շնորհաւոր նոր պաշտօնդ. ողջ քաղաքը քո անունն է տալիս, թագաւորը քեզ այդպէս սիրեց, մեծացրեց, այդպիսի պատուի արժանացրեց:

— Բ՛հ, ես թագաւորի այսպէսն ու այնպէսը — ասում է փինաչին, առանց կասկածելու բնաւ թէ թա-

¹⁾ Սիրելի:

գաւորն ինքն է հետը խօսողը — պատիժ, ի՛նչ պատիւ: Եւ արի չարի՛ փողն էլի ասաց որ ամսագլխին պիտի տայ: Ղէ արի էլը ցնիցը հանիր: Եւ անեմ, ի՛նչ չա- նեմ, իրտեղից մի աբասին ճարեմ — էլ երկար ու բա- րակ միտք չարի ու ուղիղ դէպի մի զինազործի դու- քան. թուրըս գրաւ դրի, փողն առայ ու տեղն էլ ահա՛ այս փայտէ թուրը շինել տուի որ թագաւորը չիմանայ:

Թագաւորն ապշած մին նազիր վեզրին էր նայում, մին փինաչուն էր ականջ անում: Վերջն էլի զիշերը մնացին նրան հիւր ու լուսաբացին էլ յետ եկան տուն:

Հէց այդ օրը թագաւորը կանչեց փինաչուն ու ասաց.

— Եւս ծր դու քո շնորհքը պիտի ցոյց տաս:

Ղէ գնա փողոց ու ում որ առաջինը կը պատահես, բեր այստեղ ու իմ առաջին գլուխը կտրի՛ր, տեսնեմ ինչպէս ես պաշտօնդ կատարում:

Փինաչին, խեղճ փինաչին, ահու դողը ջանն ընկած, երեսի զոյնը քցած, վիզը ծռած դուրս եկաւ ու երկու ոտ չփոխած մի ալևոր մարդու պատահեց, որ հան- դարտ իր ճանապարհն էր գնում:

— Բարի, թագաւորը քեզ կանչում է, արի գնանք:

Եւ դեռ ալևորի թուրումուքն էլ այդ տեղ կպաւ, ծնկները ծալուեցան ու խեղճ խեղճ եկաւ թագաւորի առաջին չոքեց դլուխ տուեց ու սպասում էր նրա հրամանին:

— 'Ի՛հ: դրա զըւկը կտրիր այս ըոպէին:

Փինաչին իրան մի թափ տուեց, սիրտ առաւ ու
դարձաւ թագաւորին ասաց.

— Թագաւորն ապրած կենայ, քո հրամանը հրա-
ման է, պէտք է կատարուի, բայց այս խեղճ ալեւորը
ի՞նչ մեղ ունի ականար որ դու առանց հարց ու փորձի,
անդատաստան անբան ուզում ես զըւկը կտրել տաս:

— 'Ի՛ու թէ պիտի կատարես պաշտօնդ՝ կատարի՛ր,
թէ չէ այս ըոպէին. քո զըւկը թռցնել կը տամ:

— Իրաւունք ունիս, թագաւորն ապրած կենայ.
բայց էլի եմ ասում որ այս մարդն ամեղ է: Թէ իմ
ասածը սուտ է, ինձ սրա տեղակ սպանել տու՛ր, թէ
ճշմարիտ է, թագաւորն ապրած կենայ, թէ այս մարդը
արգար է, ձեռաց իմ թուրը փայտ կը դառնայ:

Ասաց ու համարձակ հանեց փայտէ թուրը, ցոյց
տուեց բոլորին:

Թագաւորը փինաչու այդ ճարպիկութիւնը որ տե-
սաւ՝ շատ ընծայ տուեց նրան ու ճանանապարհ դրեց
որ գնայ, էլի ի՞նչ արհեստ ուզում է բանացնէ:

Աստուածանից երեք խնձոր ընկաւ. մէկն ասողին,
մէկն ասել տուողին, մէկն էլ ականջ դնողին:



4037

0008455

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0008455

